

Հայ գրականության հանրապետական օլիմպիադա 2019-2020 ուստարի

Օլիմպիադայի հարցաշարերի պատասխաններ

X դասարան

1. Հայ մեծանուն վիպասան Հակոբ Մելիք- Հակոբյանը 1872-ի հունվարի 20-ից «Մշակ» թերթի երրորդ համարում Բաֆֆի մականունով տպագրում է նամակաշար «Ուարուն Ալեքսանդր Բաֆֆիի ուղևորությունից Պարսկաստանում» խորագրով: Ահա ,սկսած այդ թվականից, Բաֆֆին դառնում է նրա գրական անունը: Այն արաբերեն Rafi անունից է, որ նշանակում է «վսեմ», «ականավոր»: Կա նաև կարծիք, որ այն արաբերենից անցել է երբաբերենին և «Րաբունի» բառից է, որ նշանակում է վարդապետ: Բաֆֆին այս մասին որևէ տեղեկություն չի թողել, իսկ նրա եղբորորդի Սողոմոն Տեր-Հակոբյանը գրում է. «Գաղափարական տեսակետից մոտենալով հարցին՝ անհավանական չէ, Բաֆֆի անվան ծագումը բաբբի բառից՝ նկատի ունենալով, որ Բաֆֆին կոչված էր հայ կյանքի մեջ նոր գաղափարների վարդապետը կամ քարոզիչը հանդիսանալու»: Բաֆֆին գաղափարապաշտական (ռոմանտիկական) ուղղության հետևորդ է. նա իր տեղծագործություններում ի հայտ է բերում իրականության արտացոլման հիմնական սկզբունքը՝ իրականի բացասումը և գաղափարի (իդեա) իրականացման երազանքը: Նա իրականության այլանդակ պատկերներին հակադրում է իր երազած վեհն ու կատարյալը, առաջադրում է իր ստեղծագործական երևակայության նոր չափանիշներ: Նա իր կերտած հերոսների մեջ տեսնում է Հայաստանի վերակերտման նվիրյալներին, գտնում է, որ երկրի զարգացումը կարող է կայանալ միայն լուսավորությամբ, կրթությամբ, պայքարով:

«Մամվել» պատմավեպը Բաֆֆու կարապի երգն է, այն տպագրվել է «Արձագանք» շաբաթաթերթում : Տպագրությունն ավարտվում է 1887 թվականի դեկտեմբերի 27-ին: Պատմավեպը գրելու շարժառիթը 1885-ին հայկական դպրոցների փակումն էր ցարական Ռուսաստանի կողմից, բայց դա լոկ առիթ էր, որովհետև հայրենասեր գրողը ամեն օր ակնդիրն ու ունկնդիրն էր մեր ժողովրդի անլուր տառապանքներին Օսմանյան կայսրության և ցարական Ռուսաստանի տիրապետության տակ: Նա պրպտում է պատմության այն ժամանակաշրջանը, որը խիստ համահունչ էր այդ օրերի քաղաքականությանը: «Մեր այժմյան դրությունը նույն դրությունն է, ինչ որ էր 4-րդ և 5-րդ դարերում», գրում է Բաֆֆի Ալեքսանդր Ադամյանին: Բաֆֆին օգտվել է 5-րդ դարի պատմիչներ Փավստոս Բուզանդի «Հայոց պատմությունից» և Մովսես Խորենացու «Հայոց Պատմությունից»:

«Այնուհետև Վահանն Մամիկոնեան եւ Մերուժանն Արծրունի, սոքա երկոքեան արք պլիդք անօրէնք էին, ապստամբեայք էին յուխտէ աստուածապաշտութեան, եւ զանաստուածն Մազդեզանց աղանդն յանձն առեալ պաշտէին... Ապա որդի մի Վահանայ, անուն Մամուէլ, եհար սատակեաց զՎահան զհայր իւր, եւ զՌմիզդուխտ զմայր իւր՝ զքոյր Շապիոյ Պարսից թագաւորին»: Բուզանդ
«Յետ մահուանն Արշակայ զումարեաց Շապուհ զօր ի ձեռն Մերուժանա եւ արձակեաց ի Հայս... Եւ զամենայն կարգ քրիստոնէութեան ջանայ խափանել... եւ զորս միանգամ զիրս գտանէր՝ այրեր, եւ հրաման տայր մի ուսանիլ զգայութիվն յունարեն, այլ պարսիկ. եւ մի քք ի իշխեսցէ յոյն խոսել կամ թարգմանել... Չի յայնժամ զիր դպրութեան հայոց չեւ եւս էր լեալ, եւ յունականան վարէին եկեղեցոյ կարգք»: Խորենացի

2. Միջնադարի վերջին հանճար Մայաթ- Նովայի ստեղծագործությանն անդրադարձել են բազում կենսագիրներ, քննադատներ, բանաստեղծներ, բայց նրա անմահական ջրից ամենաշատը խմել է իր սիրած «խալխը», որի նոքարն էր իրեն համարում Մեծ Բեգարածն ու Մեծ Ըղձավորը (Պարույր Սևակ): Խալխի նոքարը իրեն հատուկ արժանապատվությամբ հայտարարում է.

Ամեն մարթ չի կանա իւրմի՝ իմ ջուրըն ուրիշ ջրրեն է:

Ամեն մարթ չի կանա կարթա՝ իմ գիրըն ուրիշ գրրեն է:

Իսկ ո՞ւմ է դիմում խալխի նոքարը, ո՞ւմ է զգուշացնում մեծ սիրահարը. բոլոր նրանց, ովքեր թունավորում էին աշուղ- բանաստեղծի կյանքը, այդ թվում նաև իր երբեմնի մեծ բարեկամին ու բարերարին, ով հավատում է «յաղի խոսկըն», ով, լսելով պալատականների խարդավանքները, 1752-ին նրան վտարում է արքունիքից: Վրաց արքայազն Հերակլը փրկագնել էր 19-ամյա երգիչ-երաժիշտ Արուֆինին՝ նրան դարձնելով իր «սագանդարը», բայց Արուֆինը, «մոռանալով իր ծագումը», սիրահարվում է արքայադուստր և արքայաքույր Աննա Բատոնաշվիլուն՝ դրանով վիրավորելով Հերակլի արքայական

հայարտությունը: Վիրավորված Մայաթ-Նովան գրում է իր հանրահայտ «Դուն է՛ն գրվինեն » խաղը, որտեղ սթափության կոչ է անում արքային՝ չհավատալ բամբասանքներին, իսկ եթե նա ինքն է հոգնել իրենից, պատճառներ չփնտրի և ազնվորեն խոստովանի: Նա հիշեցնում է, որ ինքը՝ էն գլխից երված է, նուրմեկանց քաբաբ մի անի», բայց նա ոչ թե արդարանում է, այլ հայարտությամբ հայտարարում.

Բունիաթըս ավագ չիմանաս՝ քարափ է, քարուկըրեն է:

և ոչ ոք իրեն չի կարող գրպարտել, որովհետև.

Ամեն մարթ չի կանա իմի՝ իմ ջուրըն ուրիշ ջրրեն է

Ամեն մարթ չի կանա կարթա՝ իմ գիրըն ուրիշ գրրեն է:

Հերակլ արքան նրան նորից ընդունում է պալատ. մեծ աշուղը կրկին երգում է իր անգուգական երգերը և պատգամում. Գի՛ր սիրե, դա՛լամ սիրե, դա՛վթար սիրե.

Խըրա՛տ սիրե, սա՛բըր սիրե, շա՛ր սիրե...

Մայաթ – նովայի առաջին կենսագիրը բանահավաք Գևորգ Ախվերդյանն է: Նրա ստեղծագործությանը անդրադարձել են շատ բանաստեղծներ ու գրողներ. Այս շարքի մեծագույն երախտավորներից են Հովհաննես Թումանյանը, Մորուս Հասարթյանը, Խորեն Սարգսյանը, Հենրիկ Բախչինյանը և այլք: Իսկ Պարույր Սևակի «Մայաթ-Նովա» մենագրությունը հիրավի մոնումենտալ աշխատություն է, որ լուծում է մեծ սիրերգակի կյանքի, սիրո ու գործունեության բոլոր թնջուկները: Եղիշե Չարենցի «Տաղարան» շարքը գրված է սայաթնովյան շնչով ու սիրով: Նրա բանաստեղծական գնահատական-արձագանքն են տվել Եղիշե Չարենցը, Հովհաննես Ծիրազը, Սիլվա Կապուտիկյանը և այլք:

3. Խոշորագույն երգիծաբան Հակոբ Պարոնյանը ոչ միայն հայ երգիծաբանության հիմնադիրն է, այլև համաշխարհային երգիծանքի ներկայացուցիչներից, ում ստեղծագործությունը մրցունակ է աշխարհի մեծագույն երգիծաբանների երկերի հետ: Ծնվել է 1843-ին Ադրիանապոլսում, ուսումնառությունը ստացել է Արշակունյաց վարժարանում, ապա ուսումը շարունակել տեղի հունական վարժարանում: Սրանով ավարտվում է նրա կրթությունը, մնացյալը նա լրացնում է ինքնակրթությամբ և լրագրողական աշխատանքով: Նրա կյանքը աշխատանքի նվիրագործում է. նա խմագիր է, գրող, գրագիր ու հաշվապահ: Ապրել է ծանր պայմաններում. աշխատել է մի դեղագործի մոտ՝ ապահովելու օրվա ապրուստը, այնուհետև պաշտոնավարում է Սկյուտարի ճեմարանում, ուր նրան աշակերտում է Պետրոս Դուրյանը: Շուտով նա իր կյանքը մեկընդմիջտ կապում է խմբագրական և գրական աշխատանքի հետ՝ խմբագրելով «Եփրատը», «Մեղուն», որը նա դարձնում է ամբողջովին երգիծաբանական թերթ՝ հետագայում այն վերանվանելով «Թատրոն»: Պարոնյանը մահանում է 38 տարեկանում՝ բանաստեղծական հիվանդությունից՝ անավարտ թողնելով բազում մտահղացումներ, սակայն այն, ինչ թողել է հանձարեղ երգիծաբանը, կազմում է մեր գրականության անկողոպտելի գանձը: Պարոնյանին անվանել են Հայոց Մոլիեր, իսկ Մոլիերը 17-րդ դարի ֆրանսիական «Բարձր կատակերգության» հիմնադիրն է, բեմական արվեստի բարենորոգիչը, իրապաշտական դրամատուրգիայի նախակարապետը: Հասկանալի է, թե ինչու է Պարոնյանը Հայոց Մոլիեր, քանզի Պարոնյանը մեզանում նույնպես իրապաշտական դրամատուրգիայի հիմնադիրն է: Նրա ստեղծագործությունը կրթել ու կրթելու է բազում սերունդներ. Նա ծիծաղեցնում ու խարազանում է զվարթ ու աներկյուղ, ազատ՝ ընդլայնելով երգիծանքի սահմանները: Պարոնյանը հավաստում է. «Ես խնդալով կուզեմ կրթիլ», բայց այս խնդումի մեջ նա տխուր է, նա զվարճացնում է առանց զվարճանալու: Իր ստեղծագործություններում Պարոնյանը ծաղրել է կյանքի բոլոր արատավոր երևույթները, ծաղրել է անխտիր բոլոր խավերին և, ըստ հարկի, այդ ծաղրը ունեցել է տարբեր դրսևորումներ՝ սարկազմից մինչև արխատկրատական նուրբ հումոր: Դա հատկապես շոշոփելիորեն երևում է «Մեծապատիվ մուրացկաններ» մենագրական վեպում: Ազգային կյանքը գրեթե ամբողջապես զծված է Պարոնյանի երգիծաբանության մեջ. Նա չի խնայում ո՛չ հոգևորականներին, ո՛չ աղաներին, ո՛չ ազգային ու կրթական գործիչներին, ո՛չ Սահմանադրությունը, ո՛չ մշակներին: Նրա հեզմանքի նպատակը ուրեմն, ըստ հանձարեղ երգիծաբանի՝ «Մոլություններու վրայ ծիծաղիլը առաքինության ճամբուն մեջ գտնուիլ կ'ենթադրէ ևս այս հաշուով որչափ շատ ծիծաղ քաղեմ, այնքան նուազ մոլութիւն պիտի գտնեմ»: Մնացյալը՝ աշակերտը:

4. Հայ իրապաշտական գրականության անմրցելի վարպետ Ալեքսանդր Շիրվանզադեն ապրել ու ստեղծագործել է բավականին բարդ ժամանակահատվածում: Նա տեսել է և՛ կապիտալի մուտքն ու հաղթանակը, և՛ մարդու ազատ մտքի ու կյանքի հաղթանակը. Երկու դեպքում էլ նա մնացել է նույն իրապաշտը և մեծ գեղագիրը: Տաղանդավոր վիպասանի ստեղծագործության գլուխգործոցը՝ «Քառս» վեպը գրվել է 1896-97 թվականներին. Հեղինակը բավականին ուշագրավ հուշ է թողել «Քառսի» ստեղծագործական պատմության առթիվ. «Քառս»-ի գաղափարն իմ մեջ հղացել էր տասն ու հինգ տարի առաջ, այսինքն այն ժամանակ, երբ ես դեռ Բաքվումն էի ապրում: Դա մի գերդաստանի ընտանեկան կյանքի խռովությունն էր, որ ինձ վրա թողել էր խոր տպավորություն»: 80-ական թվականներից մինչև վեպը գրելու ժամանակը Շիրվանզադեն մտածել է այդ ազդեցիկ պատմության շուրջ և ստեղծել մի հրաշալի վեպ՝ դարաշրճանի ցավոտ խնդիրներով ու հոգեբանական կնճիթներով: Այս վեպը իրապաշտական ուղղության սոցիալ- հոգեբանական մի հրաշալի կոթող է՝ ամբողջովին համահունչ իր վերնագրին: «Միջավայրը արտաքուստ փայլուն էր, ներքուստ՝ այլանդակ ու ծայր սստիճան վտանգավոր»: Գրողը հրաշալի է կերտել փողի առասպելը, նրա այլասերող ու դավադիր ուժը: «Ոսկի երիտասարդության» յուրաքանչյուր անդամ ունի իր ուրույն բնավորությունն ու հետաքրքրությունը, բայց միանման են իրենց ցինիզմով ու լկտիությամբ, նրանք այդ քառսի տերերն են, նրանք ծաղրում են հավատարմությունն ու սերը: Ի դեմս Միքայելի՝ Շիրվանզադեն ստեղծում է երիտասարդության խնդիրների ու հեռանկարների մի նոր պատկեր: Մնացյալը՝ աշակերտը, այստեղ կարևորվում է ինքնուրույն մտածողությունը:

Հայ գրականության հանրապետական օլիմպիադա

2019-2020 ուստարի

Գնահատման չափանիշներ

X դասարան

- 1-ին ենթահարց՝ 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ, 5-րդ ենթահարցերը՝ 0,5-ական միավոր, 6-րդ հարցը՝ 2,5 միավոր:
- 2-րդ հարց. 1-ին ենթահարց՝ 2մ., 3-րդ ենթահարց՝ 1մ., մնացյալները՝ 2, 4, 5, 6՝ 0,5-ական միավոր:
- 3-րդ հարց. 1-ին, 2-րդ, 3-րդ ենթահարցերը՝ 1-ական միավոր, 4-րդ ենթահարցը՝ 1,5 միավոր, 5-րդ ենթահարցը՝ 0,5 միավոր:
- 4-րդ հարց. 1-ին, 2-րդ ենթահարցերը՝ 0,5-ական միավոր, 3-րդ, 4-րդ ենթահարցերը՝ 2-ական միավոր: